ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 170/42-ՀՐ «07 09» 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետն ու իրավագիտության ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի ի պաշտոնե անդամների կազմից լիազորության դադարեցման հիմքով հանել պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Ղազինյանին: Ի պաշտոնե անդամների ցանկում ընդգրկել Պետության և իրավունքի տեսության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ի.գ.թ. Գևորգ Վիրաբյանին:

2. Ֆակուլտետի գիտական խորհրդի նախկին քարտուղար Տաթևիկ Սուջյանին ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր ընտրվելու հիմքով ընդգրկել հրավիրյալ անդամների կազմում: Հասմիկ Ենգոյանի փոխարեն ֆակուլտետի ԳԽ կազմ ընդգրկել Մերի Խաչատրյանին՝ նշանակելով ԳԽ քարտուղար:

3. Հրավիրյալ անդամներ Գագիկ Հարությունյանի ու Վլադիմիր Հովհաննիսյանի փոխարեն ԳԽ կազմ ընդգրկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ, ի.գ.դ. Լիլիթ Թադևոսյանին ու ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, ի.գ.թ. Արման Դիլանյանին:

4. ԳԽ կազմից ուսումնառության ավարտման հիմքով հանել ֆակուլտետի ՈՒԽ նախկին նախագահ Անի Չիլինգարյանին ու ասպիրանտ Դավիթ Թովմասյանին՝

նրանց փոխարեն որպես սովորող անդամ ընդգրկելով ՈՒԽ նորընտիր նախագահ Անուշ Գասպարյանին ու ասպիրանտ Անահիտ Բաբախանյանին:

5. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտական քարտուղարին, իրավագիտության ֆակուլտետին ու խորհրդի անդամներին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ